«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1465-Ն և 2016թ. սեպտեմբերի 8-ի թիվ 929-Ն որոշումների համաձայն իրականացրել է աշխատանքներ 79038,8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ որից՝

- «Շիկահող» մասնաճյուղ «Շիկահող» պետական արգելոց» տեղամաս– 12137.075հա
- «Սոսու պուրակ» պետական արգելավայր» տեղամաս– 64.2հա
- «Խուստուփ» պետական արգելավայր» տեղամաս- 6946.74հա
- «Զանգեզուր» մասնաճյուղ «Զանգեզուր» պետական արգելավայր» տեղամաս- 25711,5959հա
- «Սև Լիճ» պետական արգելավայր» տեղամաս– 240հա
- «Արևիք» մասնաճյուղ «Արևիք» ազգային պարկ» տեղամաս- 31211,19հա
- «Բողաքար» պետական արգելավայր» տեղամաս- 2728հա

1. Բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման միջոցառումների իրականացում

1.1 ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդհանուր միջոցառումների իրականացում (79038.8 հա):

Աշխատանքներն իրականացվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի 2026 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն:

Առաջին կիսամյակի ընթացքում բնության հատուկ պահպանվող տարածքներում իրավախախտման դեպքեր չեն արձանագրվել:

1.2 Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:

Հնարավոր հրդեհների առաջացումը կանխելու նպատակով ձեռնարկվել են գործուն միջոցներ և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գույքը բեվել է պատրաստի վիճակի:

1.3 Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքների միջոցառումների իրականացմանը:

2026 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների, հարակից համայնքների ղեկավարների և ՊՆ ղեկավարության հետ անց են կացվել քննարկում-զրույցներ՝ 45 անգամ:

1.4. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:

Ընդհանուր միջոցառումների, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացված հանդիպումների շնորհիվ, ապահովում ենք բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության պահպանությունը և բնականոն կայուն զարգացումը:

1.5 Ծառատնկման աշխատանքների իրականացում

Մարտի 21-ին, Անտառների միջազգային օրվա կապակցությամբ, «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող «Սոսու պուրակ» արգելավայրում իրականացվել է ծառատունկ, որին ներգրավվել են Ծավի միջնակարգ դպրոցի աշակերտները: Տնկվել է 50 հատ Արևելյան սոսի:

Կիսամյակի ընթացքում «Սոսու պուրակ» պետական արգելավայրում տնկվել է 100 հատ Արևելյան սոսի:

ՀՀ Պաշտպանության նախարարության N զորամասի տարածքում իրականացվել է ծառատունկ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանից նվիրաբերված 100 տնկիներով:

2. Գիտական և էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ

2.1 Գիտահետազոտական միջոցառումների իրականացում

ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում,

բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն, վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորսիական ընձառյուծ), ներառյալ բուսական տեսակների հաշվառմանն ուղղված աշխատանքներ,

գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ:

Առաջին Կիսամյակի ընթացքում իրականացվել են շրջայցեր և ստուգայցեր «Շիկահող» և «Արևիք» մասնաճյուղեր, որոնց ընթացեքում իրականացվել են խոշոր կաթնասունների որոշ ներկայացուցիչների տեսակային ուսումնասիրություններ, այդ թվում՝ դրանց բնակավայրերի, անտառային և լեռնային արահետների, միգրացիոն հատվածների, թողած հետքերի և ոտնահետքերի ուսումնասիրություններ: Խոշոր կաթնասունների մշտադիտարկման աշխատանքների ընթացքում «Զանգեզուր» արգելավայրում արձանագրվել է 27 առանձնյակից բաղկացած Բեզոարյան այծերի (Capra aegagrus) խումբ: «Շիկահող» պետական արգելոցում հանդիպել են Սովորական աղվես (Vulpes vulpes), Գորշուկ (Meles meles), Սովորական շնագայլ (Canis aureus), ինչպես նաև իրականացվել են ոտնահետքերի և թողած հետքերի ուսումնասիրություններ, որոնց ընթացքում արձանագրվել են Վայրի խոզի (Sus scrofa) և Գորշ արջի (Ursus arctos) հետքեր:

Իրականացվել են ԶԿՀ մասնաճյուղերում հանդիպող, բնադրվող, չվող թռչնատեսակների տեսակային ուսումնասիրություններ, գարնանային վերադարձ կատարած տեսակներն արձանագրելու նպատակով: Ուսումնասիրությունների ընթացքում գարնանային վերադարձ է արձանագրվել հետևյալ տեսակների մոտ՝ Ծնկլտան գեղգեղիկ, Հոպոպ, Սևագլուխ շահրիկ, Անապատային մորեհավ, Սովորական կարմրատուտ, Երգող շահրիկ, Այծկիթ, Գյուղական ծիծեռնակ, Փոքր արտույտ, Մարգագետնային չքչքան:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF-Armenia) մասնագետները, ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացրել են կենդանական աշխարհի մշտադիտարկում, որի ընթացքում արձանագրվել են Ընձառյուծի թարմ հետքեր: Իրականացվել է տեղադրված ֆոտոբռնիչ սարքերի ստուգում, որոնց կողմից պարբերաբար արձանագրվել են Եվրոպական լուսան, Բեզոարյան այծ, Վայրի խոզ, Գորշ արջ և այլ տեսակներ:

ՊՈԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամ- Հայաստանի համագործակցությամբ իրականացվող «Ընձառյուծի պահպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում իրականացվել են «Արևիք» մասնաճյուղի տարածքում տեղադրված ֆոտոբռնիչ սարքավորումների ստուգման և հիշողության քարտերի փոխարինման աշխատանքներ: Տվյալները կուսումնասիրվեն և հետագայում կտրվի լրացուցիչ տեղեկատվություն:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում իրականացվել են հանդիպող, տարածքներում բնադրվող, չվող թռչնատեսակների տեսակային ուսումնասիրություններ, որոնց ընթացքում գարնանային վերադարձ է արձանագրվել հետևյալ տեսակների շրջանում՝ Կիսասպիտակավիզ ճանճորս, Փոքր ճանճորս, Դալուկ մորեհավ, Կովկասյան գեղգեղիկ, Սովորական քարաթռչնակ, Պարող քարաթռչնակ, Սեվախայտ քարաթռչնակ, Սովորական սոխակ, Հարավային սոխակ, Պիրոլ, Ժուլան, Կարմրակատար շամփրուկ, Անտառային ճիաթռչնակ, Դեղին խաղտտնիկ, Տափաստանային արտույտ, Անտառային արտույտ, Փոքր արտույտ, Եվրոպական բվիկ, Սովորական կկու, Մարգագետնային մկնաճուռակ, Գիշանգղ, Գաճաճ արծիվ, Օձակեր արծիվ, Կրետակեր: Չվող և նստակյաց տեսակներից մեծ մասի մոտ նկատվել են բնականոն բնադրում և ձվադրում:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կովկասի բնության հիմնադրամի կողմից համատեղ մշակված կենսաբազմազանության մշտադիտարկման տասնամյա պլանով նախատեսված ցուցիչ տեսակների ուսումնասիրության շրջանակներում՝ ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվել է կրծողների մշտադիտարկում՝ «Կաթնասունաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի գիտաշխատողների և ՊՈԱԿ-ի մոնիթորինգի մասնագետի կողմից:

«Արևիք» մասնաճյուղի տարածքում իրականացվել են միջատաբանական ուսումնասիրություններ՝ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Մարիա Կյուրի- Սկլոդովսկայի անվան համալսարանի գիտաշխատողների կողմից:

«Բույսերի բազմազանության մշտադիտարկումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում» ծրագրի շրջանակում մայիս և հունիս ամսվա ընթացքում ՊՈԱԿ-ի գիտության, մոնիթորինգի և զբոսաշրջության մասնագետների կողմից իրականացվել են ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի

հատուկ պահպանվող տարածքներում տեղադրված փորձահրապարակների ուսումնասիրություններ, մասնավորապես՝ «Շիկահող» պետական արգելոցում, «Զանգեզուր» արգելավայրում և «Արևիք» ազգային պարկում:

- **«Շիկահող» պետական արգելոցում** ուսումնասիրվել են.

Էկոհամակարգային փորձահրապարակներից՝ E2, E4, E5, E12, E13, E14, E16, E17, E18:

E1 փորձահրապարակը ոչնչացվել է կենդանիների պատճառով:

E3 փորձահրապարակը ոչնչացվել է ճանապարհաշինարարական աշխատանքների պատճառով:

E6 փորձահրապարակի մոնիթորինգը չի հաջողվել իրականացնել կապի բացակայության պատճառով:

E7 փորձահրապարակը գտնվում է զորամասին հարակից գոտում, որտեղ թույլ չէր տրվում աշխատանքներ իրականացնել:

E15 փորձահրապարակը ոչնչացվել է սողանքի պատճառով:

E19 փորձահրապարակը կորսված է և վերականգնման ենթակա չէ՝ տեղադիրքի և տապալված ծառերի պատճառով:

E20 փորձահրապարակը ոչնչացվել է գետի հունի բարձրացման պատճառով:

E21 փորձահրապարակը Survey123 առցանց լրացման համակարգում բացակայում է:

Հազվագյուտ և անհետացող տեսակների փորձահրապարակներից՝ R1, R3: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ R5 փորձահրապարակը կորսված է՝ հակահրդեհային նշանակության ճանապարհի սպասարկման արդյունքում և վերականգնման ենթակա չէ:

Անտառային էկոհամակարգերի վիճակի ցուցիչ տեսակների փորձահրապարակներից՝ F2, F4, F15, F16:

F7, F8, F9 փորձահրապարակների մոնիթորինգը չի հաջողվել իրականացնել կապի բացակայության պատճառով:

Վերոնշյալ որոշ փորձահրապարակներում կատարվել են վերականգնման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ՝ **«Շիկահող» պետական արգելոցում** ուսումնասիրվել է 27 փորձահրապարակ, որից 5-ը կորսված է:

- **«Զանգեզուր» արգելավայրում** ուսումնասիրվել են.

Էկոհամակարգային փորձահրապարակներից՝

E27 – գետի հունի բարձացման պատճառով ոչնչացվել է:

E30 – բացակայում էր կենդանիների շարժի պատճառով:

Արածեցման ազդեցության գնահատման փորձահրապարակներից՝ G7.A + G7.B, G8.A + G8.B:

Ընդհանուր առմամբ՝ **«Զանգեզուր» արգելավայրում** ուսումնասիրվել է 6 փորձահրապարակ, որից 2-ը կորսված են:

- **«Արևիք» ազգային պարկում** ուսումնասիրվել են.

Էկոհամակարգային փորձահրապարակներից՝ E1, E2, E4, E8, E13, E16, E18:

E14 փորձահրապարակը բացակայում էր:

E17 փորձահրապարակը ոչնչացվել է ճանապարհաշինարարական աշխատանքների պատճառով:

Արածեցման ազդեցության գնահատման փորձահրապարակներից՝ G1.A + G1.B, G2.A + G2.B, G9.A + G9.B, G16.A + G16.B, G17.A + G17.B, G20.B, G22.A, G23.B:

G20.A – կորսված է կենդանիների պատճառով:

G23.A և G22.B փորձահրապարակները բացակայում են:

Հազվագյուտ և անհետացող տեսակների փորձահրապարակներից՝ R1, R12, R25, R27:

R14 փորձահրապարակը բացակայում էր:

Ինվազիվ և էքսպանսիվ տեսակների փորձահրապարակներից՝ I18:

Ընդհանուր առմամբ՝ **«Շիկահող» պետական արգելոցում** ուսումնասիրվել է 31 փորձահրապարակ, որից 2-ը կորսված է, իսկ 4-ը բացակայում են:

«Շիկահող» պետական արգելոցում, «Զանգեզուր» արգելավայրում և «Արևիք» ազգային պարկում, աշխատակիցների անվտանգության նկատառումներից ելնելով և իրավիճակով պայմանավորված՝ տեղադրված որոշ փորձահրապարակներում դեռևս չեն իրականացվել մշտադիտարկման աշխատանքներ:

Կիսամյակի ավարտին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքներում ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Ճապոնիայի միջատաբանական ընկերության միջև գիտական համաձայնագրի շրջանակներում իրականացվել են միջատաբանական հետազոտություններ:

2.2 Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիներով կազմակերպված գիտաճանաչողական արշավներ, զբոսաշրջային ծառայությունների մատուցում

Զբոսաշրջային ծառայություններից ստացված ձեռնարկատիրական եկամուտը կազմել է 1 440 000 ՀՀ դրամ:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Արման Մկրտչյանն ու գիտության և զբոսաշրջության բաժնի մասնագետներն առցանց քննարկում են ունեցել ֆրանսիական AFRAT կազմակերպության փորձագետների և Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի (CEPFA) ներկայացուցիչների հետ՝ էկոզբոսաշրջային գոտիների ստեղծման նպատակով ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ծրագրի՝ շարժական էկոկենտրոնի հիմնման գործընթացի ներդրումային փուլի մեկնարկի և ընթացիկ աշխատանքների քննարկման նպատակով:

Զբոսաշրջային սեզոնի մեկնարկին ընդառաջ՝ այցելուների համար ստեղծվել է առավել հարմարավետ վճարման միջոց: ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի բնության հատուկ պահպանվող տարածքների համար սահմանված մուտքավճարներն, ինչպես նաև զբոսաշրջային ծառայությունների և գույքի վարձակալական վճարներն այսուհետ հասանելի են Easypay վճարային տերմինալներում և EasyWallet առցանց դրամապանակում:

«Արևիք» ազգային պարկում գտնվող Սրտերի ջրվեժ տանող արահետի արդիականացման և վերազինման նպատակով կնքվել է եռակողմ պայմանագիր՝ ՊՈԱԿ-ի, Կովկասի բնության հիմնադրամի և «Արահետներ փոփոխության համար» ՀԿ-ի միջև: Արահետի ընդհանուր երկարությունը մեկնարկային կետից մինչև վերջնակետը կազմում է 3,7 կմ: Նախատեսվում է հենապատերի և ջրահեռացման համակարգի և նոր անցուղու կառուցում (մոտ 650մ), 3 կմ գոյություն ունեցող արահետի սպասարկում՝ ճյուղերի կտրում, թփերի մաքրում, արահետի մակերեսի վերանորոգում, մոտ 70 քարե աստիճանների կառուցում, անվտանգ հասանելիության համար պարանային անցումներ, արաահետի նշագծում և ցուցանակների տեղադրում: Աշխատանքների մեկնարկը տրվել է և «Արահետներ փոփոխության համար» ՀԿ-ի մասնագետների և կամավորների կողմից իրականացվել են արահետների մաքրման և լայնացման, անցուղիների հարթեցման, որոշ հատվածներում՝ քարե աստիճանների տեղադրման աշխատանքներ: Արահետի կառուցումն իրականացվում է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի պատվերով և Կովկասի բնության հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Իրականացվել են զբոսաշրջային արահետների բարելավման սեզոնային աշխատանքներ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում՝ «Շիկահող» պետական արգելոցում, «Սոսու պուրակ» արգելավայրում և «Արևիք» ազգային պարկում կատարվել են արահետների նշագծման, անցուղիների մաքրման և նոր տեղեկատվական, ուղղորդող և զգուշացնող ցուցանակների տեղադրման աշխատանքներ, որոնք կկրեն շարունակական բնույթ:

«Խուստուփ» արգելավայրի Անտառամոք կոչվող հատվածում իրականացվել է նոր զբոսաշրջային արահետի նախնական գնահատում և խնդիրների վերհանում՝ ՊՈԱԿ-ի մասնագետների և լուսանկարիչ՝ Հայկ Բարսեղյանի համագործակցությամբ: Նախատեսվող արահետի երկարությունը 3,2 կմ է,

քարտեզագրվել և առանձնացվել են կատարվելիք աշխատանքներն ու առաջնահերթությունները:

ՊՈԱԿ-ի զբոսաշրջային հիմնական ուղղությունները՝ «Զանգեզուր» արգելավայրի Ծաղկարի և Կապուտան լճեր, դեռևս չեն շահագործվում՝ ՀՀ ՊՆ կողմից արգելքի պատճառով, ինչն անդրադառնում է ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական եկամուտների և զբոսաշրջային հոսքի հապաղման վրա:

2.3 ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող էկոկրթական միջոցառումներ՝ հանրության իրազեկվածության և էկոլոգիական գիտակցության բարձրացման նպատակով.

Բնապահպանական իրազեկվածության բարձրացման նպատակով՝ ՊՈԱԿ-ի Գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցների կողմից՝ ԲՀՊՏ հարակից գյուղական բնակավայրերում և Կապան համայնքում անց է կացվել 13 էկոկրթական հանդիպում, որոնց մասնակցել է 408 անձ:

Հայաստանում կենսաբազմազանության պահպանության ու անտառային հրդեհների կանխարգելման միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված էկոկրթական դասընթացի շրջանակում՝ բաժնի աշխատակիցները հանդիպում են ունեցել Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցի 7-9-րդ դասարանների աշակերտների հետ, որի ընթացքում ներկայացվել են Հայաստանում կենսաբազմազանության պահպանության մեթոդները, էկոհամակարգերի խաթարման դրդապատճառները, մասնավորապես՝ անտառային հրդեհների առաջացման գործոնները, տեսակներն ու վտանգավորության աստիճանները, կանխարգելման մեթոդները:

«Կենսաբազմազանության պահպանությունը Հայաստանում» թեմայով դասընթաց է կազմակերպվել Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում, որի ընթացքում ներկայացվել են կենսաբազմազանության էությունն ու ոչնչացման գործոնները, դրա անխաթարության պահպանմանը միտված միջոցառումները, պահպանության ձևերը, անդրադարձ է կատարվել բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակներին ու դասակարգմանը, Սյունիքի մարզի՝ ԶԿՀ ենթակայության տակ գտնվող ԲՀՊՏ-ները, ինչպես նաև մարդ-բնություն կապի ամրապնդմանը՝ էկոզբոսաշրջության միջոցով:

«Կենսաբազմազանության պահպանությունը Հայաստանում» թեմայով դասընթացի անցկացման նպատակով ՊՈԱԿ-ի Գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները հյուրընկալվել էին Արծվանիկի միջնակարգ դպրոցում: Հանդիպման ընթացքում ներկայացվել են կենսաբազմազանության էությունն ու ոչնչացման գործոնները, դրա անխաթարության պահպանմանը միտված միջոցառումները, պահպանության ձևերը, անդրադարձ է կատարվել բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակներին ու դասակարգմանը, Սյունիքի մարզի՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող ԲՀՊՏ-ները, ինչպես նաև մարդ-բնություն կապի ամրապնդմանը՝ էկոզբոսաշրջության միջոցով:

Հայաստանում կենսաբազմազանության պահպանության ու անտառային հրդեհների կանխարգելման միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված էկոկրթական հանդիպում է կազմակերպվել ավի միջնակարգ դպրոցում, որի ընթացքում ներկայացվել են կենսաբազմազանության էությունն ու էկոհամակարգերը, վտանգման գործոնները, Հայաստանում կենսաբազմազանության պահպանության մեթոդները, էկոհամակարգերի

խաթարման դրդապատճառները, մասնավորապես՝ անտառային հրդեհների առաջացման գործոնները, տեսակներն ու վտանգավորության աստիճանները, կանխարգելման մեթոդները:

Շիկահողի միջնակարգ դպրոցում դասընթացի բուն թեման կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումների ներկայացումն էր՝ բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծում, ՀՀ կարմիր գրքերի նպատակներ, կենսաբազմազանության առանձին ներկայացուցիչների պոպուլյացիայի վերականգնման գործընթացների իրականացում, ինչպես նաև էկոկրթությունն ու էկոզբոսաշրջությունն՝ ի նպաստ բնական միջավայրերի և էկոհամակարգերի վերականգնմանը:

«Հայաստանի անտառները» թեմայով էկոկրթական դասընթաց՝ կենսաբանություն առարկայի նախագծային աշխատանքի շրջանակում:

Թռչունների միջազգային օրվան նվիրված՝ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված էկոկրթական միջոցառում, Արծվանիկի միջնակարգ դպրոցում: Թռչուններն առանցքային դերակատարում ունեն յուրաքանչյուր էկոհամակարգում և, առհասարակ, կենսաբանական շղթայում, որոնց թվաքանակի կրճատումը բնության մեջ անդառնալի հետևանքներ կարող է ունենալ, թե՛ էկոլոգիական, թե՛ սոցիալ-տնտեսական առումով: Արծվանիկի միջնակարգ դպրոցում անց է կացվել թռչունների դերի և նշանակության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված դասընթաց՝ բաղկացած երեք փուլից՝ «Հայաստանի թռչնաշխարհը» թեմայով սեմինար, «Թռչնադիտարկում» տեսաֆիլմի դիտում, թռչնաբների տեղադրում և թռչունների տարբերակում՝ դայլայլի և արտաքին հատկանիշների միջոցով:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում հյուրընկալվել էին Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները: Դասընթացի ընթացքում ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները ներկայացրել են անտառների դերն ու նշանակությունը, ֆիտոցենոզում և էկոհամակարգում ծառերի դերակատարումը, անտառների վտանգման գործոնները, անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների նպատակները, անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքների տարբերությունն ու փուլերը: Դասընթացի առանցքային թեման տնկանյութի աճեցման գործընթացի ներկայացումն էր, ըստ այդմ՝ աշակերտները ծանոթացան «Սոսու պուրակ» արգելավայրում գործող տնկարանի գործունեությանը, տեսակային կազմին, տնկիների աճեցման վեգետատիվ և սերմային աճեցմանը, բաց և փակ արմատային աճեցման տարբերություններին, ինչպես նաև Արևելյան սոսու և կաղնու սերմերից տնկանյութի ստացման փուլերին:

ՊՈԱԿ-ի Գիտության և զբոսաշրջության բաժնի մասնագետները հյուրընկալվել էին Կապանի թիվ 1 հիմնական դպրոցում՝ 9-րդ դասարանի «Կենսաբանություն» առարկայի նախագծային աշխատանքի շրջանակում ՝աշակերտներին փակ արմատային համակարգով բուսակների աճեցման գործընթացին ծանոթացնելու և գործնական աշխատանք իրականացնելու նպատակով:

«Զանգեզուր» արգելավայրին հարակից՝ Ձագիկավանի միջնակարգ դպրոցում կազմակերպվել է «Բնություն. անտառն ու մարդը» խորագիրը կրող ինտերակտիվ դասընթաց, որի ընթացքում մասնագետների կողմից ներկայացվել են բնության էությունը և դրա բաղկացուցիչ տարրերը, կենդանի օրգանիզմների և անկենդան

նյութերի փոխազդեցությունները, անտառային էկոհամակարգերի, հատկապես՝ ծառերի դերը, մարդու հետքը շրջակա միջավայրում՝ բացասական ազդեցությունը, Կարմիր գրքերի ստեղծման շարժառիթները, ինչպես նաև ներկայացվել են բնության բարելավմանն ուղղված վարվելաձևը: Ստացված գիտելիքների ամրապնդման նպատակով կազմակերպվել են դիդակտիկ խաղեր՝ «Անտառի փրկիչներ». Մաքրենք անտառն աղբից՝ տեսակավորելով թափոնները և «Ուրախ և տխուր» մոլորակ: Առանձնակի ուշագրավ էին դպրոցում բնապահպանական կրթության հանդեպ վերաբերմունքն ու աշակերտների կողմից իրականացված թեմատիկ աշխատանքները:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մասնագետները, ԿԳՄՍ նախարարության՝ «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» ծրագրի շրջանակում, հյուրընկալվել էին Կապանի թիվ 9 ավագ դպրոցում՝ բնապահպանական անվտանգության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված դասընթացի անցկացման նպատակով: Շրջակա միջավայրի բնական գործընթացների խախտում առաջացնող՝ մարդկային ներգործության արդյունքում առաջացած բնության անհավասարակշիռ իրավիճակը հանգեցնում է ոչ միայն բնական էկոհամակարգերի, կենսամիջավայրերի, ջրային և հողային տարածքների քայքայմանն ու կորստին, այլ նաև մարկության համար վտանգավոր միջավայր է ստեղծում՝ աղետների, տարատեսակ հիվանդությունների և վնասների տեսքով: Ներկայացվել են նաև խաթարված բնական տարածքների վերականգնման ու զարգացման ընթացակարգերն ու առանձնակի շեշտվել է մարդու դերակատարումն առավել անվտանգ միջավայրի ստեղծման գործում:

ՊՈԱԿ-ի էկոկրթական ծրագրի շրջանակում Դավիթբեկի միջնակարգ դպրոցում կազմակերպվել է «Բնություն. անտառն ու մարդը» խորագիրը կրող ինտերակտիվ դասընթաց, որի ընթացքում մասնագետների կողմից ներկայացվել են բնության էությունը և դրա բաղկացուցիչ տարրերը, կենդանի օրգանիզմների և անկենդան նյութերի փոխազդեցությունները, անտառային էկոհամակարգերի, հատկապես՝ ծառերի դերը, մարդու հետքը շրջակա միջավայրում՝ բացասական ազդեցությունը, Կարմիր գրքերի ստեղծման շարժառիթները, ինչպես նաև ներկայացվել են բնության բարելավմանն ուղղված վարվելաձևը: Ստացված գիտելիքների ամրապնդման նպատակով կազմակերպվել է դիդակտիկ խաղ՝ «Անտառի փրկիչներ» թեմայով, որի ընթացքում աշակերտներն ազատեցին անտառն աղբից և սովորեցին տեսակավորել թափոնները:

Կենսաբազմազանության միջազգային օրվան նվիրված՝ մայիսի 21-ին և 23-ին կազմակերպվել է «Դեպի կայուն կենսաբազմազանություն. COP17» երկփուլ միջոցառում՝ նպատակաուղղված ապագա սոցիալական աշխատողներին՝ որպես թիրախային խմբերի հետ աշխատող հիմնական օղակ, ծանոթացնելու բնապահպանական իրազեկման մեթոդներին ու գործիքակազմին:

Առաջին փուլի ընթացքում մասնակիցներին ներկայացվել է կենսաբազմազանության էությունը, Հայաստանի կենսաբազմազանությունը, սպառնալիքներն ու պահպանության ձևերը, Հայաստանի պարտավորությունները՝ Կենսաբազմազանության մասին ՄԱԿ-ի համաձայնագրի շրջանակում և կենսաբազմազանության ազգային ռազմավարության գործողությունների ծրագրի թիրախներն ու նպատակները: Առանձնակի ներկայացվել է Հայաստանում ս/թ հոկտեմբերի 19-30-ը կայանալիք՝ ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի 17-րդ համաժողովի առաքելությունն ու նպատակները, առկա մարտահրավերներն ու հնարավորությունները Հայաստանի համար: Ցուցադրվել է

COP17-ի տարբերանշանի՝ Երևանյան կապտաթիթեռի ընտրության մասին պատմող տեսաֆիլմը: Առանձնացվել են թիրախային խմբերի հետ աշխատանքի շրջանակում իրազեկման մեթոդների ու գործիքների կիրառելիությունը և տարբերակները:

Երկրորդ փուլն իրականացվել է մայիսի 23-ին՝ «Շիկահող» պետական արգելոցում: Կազմակերպված գիտաճանաչողական արշավի ավարտին մասնակիցները ստացան հավաստագրեր և նվերներ՝ ՊՈԱԿ-ի կողմից: Վորլդ Վիժն Հայաստանի Կապանի տարածքային գրասենյակի հետ երկարամյա համագործակցության շրջանակում, միջոցառման մասնակից են ընտրվել Կապանի պետական բժշկական քոլեջի «Սոցիալական աշխատանք» ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողները:

Համագործակցություն, հանդիպումներ, սեմինարներ

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արման Մկրտչյանը ս/թ փետրվարի 9–ից 13-ը մասնակցել է Հնդկաստանի Կարնատակա նահանգում՝ Հնդկաստանի շրջակա միջավայրի, անտառների և կլիմայի փոփոխության նախարարության, Հնդկաստանի տեխնիկական և տնտեսական համագործակցության ծրագրի (ITEC) և Խոշոր կատվազգիների պաշտպանության միջազգային դաշինքի (IBCA) կողմից կազմակերպված՝ Վայրի բնության և կենսաբազմազանության պահպանության ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման ծրագրին, որը նպատակաուղղված էր զարգացնելու ոլորտի մասնագետների կարողությունները, խթանել փորձի փոխանակումը և ամրապնդել մասնագիտական համագործակցությունը՝ տարբեր երկրների միջև: Դասընթացի շրջանակում քննարկվել են խոշոր կատվազգիների մշտադիտարկման ընթացքում ծառացած մարտահրավերների հաղթահարման ռազմավարությունները, գործողությունների պլանավորման և կառավարման արդիական մոտեցումները, իրավական դաշտի և ապօրինությունների կանխարգելման գործիքակազմը, տեխնոլոգիական նորարարությունների կիրառումը, էկոհամակարգերի վերականգնման և գնահատման գործիքները, համայնքային մասնակցության ընդլայնումը, ինչպես նաև կայուն էկոզբոսաշրջության զարգացումը և ֆինանսավորման հնարավորությունները: Ծրագրի ընթացքում Արման Մկրտչյանը ներկայացրել է Հայաստանի կենսաբազմազանությունը, ազգային առաջնահերթություններն ու իրականացվող ծրագրերը՝ կարևորելով միջազգային փորձի կիրառման և համագործակցության ընդլայնման դերը՝ բնապահպանական քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում: Առանձնակի ներկայացվել է դաշինքի կողմից առանձնացված 7 խոշոր կատվազգիներից՝ Ընձառյուծի համար Հայաստանի մշտական ապրելավայր հանդիսանալը, տեսակի մշտադիտարկման առանձնահատկություններն ու ոլորտային ձեռքբերումները: Ծրագրի գործնական փուլում կազմակերպվել են դաշտային այցելություններ՝ Բանդիպուր և Նագարհոլե վագրերի արգելոցներ, որտեղ մասնակիցները ծանոթացել են պահպանվող տարածքներին և դրանցում առկա ենթակառուցվածքներին, մարդ–վայրի բնություն հակամարտության նվազեցման միջոցառումներին և կենսամիջավայրերի բարելավման աշխատանքներին:

«Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» ծրագրի շրջանակներում փետրվարի 25-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արման Մկրտչյանն առցանց քննարկում է ունեցել ՇՄՆ Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի

ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են ծրագրի արդյունավետության և շահակիր կողմերի հետ համագործակցության խթանման գործիքակազմերը:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամ Հայաստանի համագործակցության շրջանակում, Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից «Արևիք» ազգային պարկին հարակից Շվանիձոր բնակավայրի դպրոցին և մանկապարտեզին նվիրաբերվել են կրթական միջավայրի բարելավման համար անհրաժեշտ սարքավորումներ, ինչպես նաև անհատական նվեր-փաթեթներ, նպատակ ունենալով խրախուսել և ներգրավել համայնքի բնակիչներին բնության պահպանության գործին:

Ս/թ ապրիլի 27-29-ը ՊՈԱԿ-ի «Շիկահող» մասնաճյուղի մոնիթորինգի մասնագետ՝ Գոռ Նավասարդյանը մասնակցել է՝ Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից «Կենսաբազմազանություն և կայուն զարգացում» ծրագրի «Կենսաբազմազանություն և բնության հատուկ պահպանվող տարածքներ» բաղադրիչի շրջանակում մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներին:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Արման Մկրտչյանը մասնակցել է Չինաստանի Սիչուան նահանգում՝ սույն թվականի մայիսի 17–ից 23-ն ընկած ժամանակահատվածում կայացած՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների (PCA) կառավարման արդյունավետության բարձրացումն ու ամրապնդումը» թեմայով Գիտելիքի փոխանակման գլոբալ աշխատաժողովին: Հայաստանի պատվիրակության անդամներն էին նաև նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրենի ժ/պ՝ Արմեն Եսոյանը և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ռադիկ Օղիկյանը: Աշխատաժողովը փորձի փոխանակման, նորարարական մոտեցումների ներկայացման ընդարձակ հարթակ էր՝ միտված պահպանվող տարածքների համակարգերի պլանավորման և կառավարման արդյունավետության բարձրացման գործընթացին: Ոլորտային հաջողությունների ներկայացման համատեքստում նշանակալի առանձնանում էր Չինաստանի ձեռքբերումներն ու փորձն՝ ազգային պարկերի համակարգի ձևավորման, ինչպես նաև պահպանվող տարածքների պլանավորման, կառավարման և ֆինանսավորման համակարգային գործիքակազմերի զարգացման ոլորտներում՝ զուգորդված հարակից համայքնային բնակչության ուղիղ ներգրավածության և սոցիալ-տնտեսական բարելավման գործընթացով: «Մեծ պանդա» ազգային պարկի հիմնման օրինակով՝ այցելության ընթացքում ներկայացվել են միասնական կառավարման մոդելի առավելություններն ու հնարավորությունները՝ նախկինում տարբեր գերատեսչությունների կողմից կառավարվող մոտ 80 պահպանության տարբեր ռեժիմ ունեցող պահպանվող տարածքների համեմատությամբ: Կառավարման այս մոդելն առավելագույնս շեշտադրում է միասնաբար գործելու կարևորությունը, ինչպես նաև ցուցադրում է պահպանվող տարածքի արդյունավետ պահպանության մեկտեղումն ընդհանուր սոցիալ- տնտեսական զարգացման գործում: Պանելային քննարկումների ընթացքում ներկայացվել և քննարկվել են Կենսաբազմազանության գլոբալ շրջանակի նպատակների իրականացման ուղղությամբ ազգային ռազմավարություններն ու արձանագրված առաջընթացը:

«Բույսերի բազմազանության մշտադիտարկումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում» ծրագրի շրջանակում՝ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արման Մկրտչյանը հյուրընկալել է ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Կենսաբազմազանության մոնիթորինգի խմբին՝ ղեկավար Հայկ Խուդաբաշյանի գլխավորությամբ, բույսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացման ուղղված մեթոդաբանության քննարկման, ինչպես նաև երկու ՊՈԱԿ-ների կողմից ուսումնասիրվող փորձահրապարակների համադրման նպատակով: Կենսաբազմազանության մոնիթորինգի խմբի կողմից «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի պահպանվող տարածքներում կիրականացվեն ցուցիչ, կարմիրգրքյան և այլ թիրախային տեսակների ուսումնասիրություններ և տվյալների հավաքագրում՝ ArcGIS Survey123 հավելվածով: «Բույսերի բազմազանության մշտադիտարկումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում» ծրագիրն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կովկասի բնության հիմնադրամի համագործակցության շրջանակում և վերջինիս ֆինանսավորմամբ:

Հանրության առցանց իրազեկում

«Սյունիք» հեռուստաընկերության կողմից անդրադարձ է կատարվել վերջերս Կապանի երկնքում սավառնող՝ Ողջի և Վաչագան գետերում և ջրաճահճային տարածքներում հանդիպող Տառեղ թռչնատեսակին: Մանրամասները ներկայացվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի մասնագետի կողմից:

Կիսամյակի ընթացքում ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջում տեղադրվել են տեղեկատվական նյութեր՝ ԲՀՊՏ-ներում արված կենդանատեսակների և բուսատեսակների լուսանկարներ ու տեսանյութեր, ՊՈԱԿ-ի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ հրապարակումներ, լուսաբանվել են ամսվա ընթացքում հանրայնացման ենթակա աշխատանքները:

Կիսամյակի ընթացքում, զբոսաշրջային ակտիվ ժամանակահատվածով պայմանավորված, ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում տեղադրվել են անվտանգային իրազեկման տեղեկատվական նյութեր՝ տիզերի և կոծուկի մասին, որոնք լայն տարածում են գտել համացանցում, ինչպես նաև հրապարակվել են ԲՀՊՏ-ներում արված կենդանատեսակների և բուսատեսակների լուսանկարներ ու տեսանյութեր, ՊՈԱԿ-ի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ հրապարակումներ, լուսաբանվել են ամսվա ընթացքում հանրայնացման ենթակա աշխատանքները:

Հայաստանում էկոտուրիզմի զարգացման նախադրյալների մասին «Արմենպրես»-ի հետ զրույցում խոսել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի զբոսաշրջության ավագ մասնագետ- հանրության հետ կապերի պատասխանատու՝ Մարիա Պետրոսյանը. «Զբոսաշրջության զարգացման մեկնարկումը՝ շրջակա միջավայրի պահպանության հետ ենթադրում է կայուն զբոսաշրջության ձևավորման գործընթաց, որի ընթացքում զբոսաշրջության զարգացումը սկզբունքորեն հիմնվում է շրջակա միջավայրի անխաթարության պահպանման, սոցիալական պատասխանատվության և տնտեսական աճի վրա»: Մասնագետը նշել է, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն առանցքային դերակատարում ունի կայուն զբոսաշրջության զարգացման գործում, հանդիսանալով Հայաստանի բնության հատուկ պահպանվող

տարածքների կառավարումն իրականացնող կազմակերպությունների անմիջական համակարգող, իսկ բնության հատուկ պահպանվող տարածքներն՝ իրենց հերթին, էկոլոգիական զբոսաշրջության հսկայական ներուժ ունեն: Էկոզբոսաշրջությունը պատասխանատու ճամփորդությունն է դեպի՝ հնարավորինս անխաթար և լավ պահպանված բնական տարածքներ, ենթադրելով բնական պաշարների օգտագործման նվազեցում, տեղի մշակույթի պահպանում, տեղական արտադրանքի և ծառայությունների սպառում, նպաստելով շրջակա միջավայրի և բնակչության սոցիալ-տնտեսական բարելավմանը»:

ՊՈԱԿ-ի զբոսաշրջության ավագ մասնագետ- հանրության հետ կապերի պատասխանատուն՝ Կենսաբազմազանության օրվա կապակցությամբ, «Սյունիք» հեռուստաընկերության կողմից նկարահանված հաղորդաշարի ընթացքում ներկայացրել է Հայաստանում կենսաբազմազանության պահպանության ձևերն ու առաջնահերթությունները, «Շիկահող» պետական արգելոցի բուսական աշխարհը, ներառյալ կարմիրգրքային տեսակները, ինչպես նաև Հայաստանի մարտահրավերները COP 17-ի շրջանակում:

Մաքրման աշխատանքներ

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվել են մաքրման և խնամքի աշխատանքներ:

Համամարզային շաբաթօրյակի շրջանակում կազմակերպության ենթակայության տակ գտնվող «Շիկահող» պետական արգելոցում, «Սոսու պուրակ» արգելավայրում, «Շիկահող» մասնաճյուղի վարչական շենքի հարակից տարածքում և «Արևիք» ազգային պարկում աշխատակիցների կողմից իրականացվել են մաքրման աշխատանքներ:

Տեխնիկական աշխատանքներ

ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող «Շիկահող» պետական արգելոցում և «Սոսու պուրակ» արգելավայրում առկա արահետների սկզբնամասերում տեղադրվել են հրդեհային անվտանգության զգուշացնող ցուցանակներ:

Հրդեհային անվտանգության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով՝ ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող «Շիկահող» պետական արգելոցում, «Արևիք» ազգային պարկում, «Սոսու պուրակ» ու «Բողաքար» արգելավայրերում և մերձակա տարածքներում ու արահետների սկզբնամասերում տեղադրվել են հրդեհային անվտանգության կանոնների և անտառային հրդեհների կանխարգելման միջոցառումների վերաբերյալ զգուշացնող ցուցանակներ:

Իրականացվել են ՊՈԱԿ-ի «Շիկահող» և «Զանգեզուր» մասնաճյուղերում տեղադրված առցանց տեսահսկման համակարգերի սպասարկման աշխատանքներ:

<<Սոսու պուրակ>> պետական արգելավայր

Կիսամյակի ընթացքում իրականացվել են «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանի մաքրման և խնամքի աշխատանքներ:

Կիսամյակի ընթացքում «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանից վաճառվել է 150 հատ Բարդի, 20 հատ Կաղնի, 80 հատ Արևելյան սոսի և 800 հատ Տոսախ, որոնց դիմաց վճարված գումարը կազմել է 1 020 000 ՀՀ դրամ:

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրենի ժ/պ՝ Ա. Մկրտչյան